ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԻ

11.02.2020 թվ. 5-ՐԴ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Նիստին ներկա խորհրդի անդամներ.

Ս.Նամչևաձե, Է.Ցոմայա, Ռ.Վարժապետյան, Վ.Վայներ, Մ.Գալստյան, Մ.Լազարևա, Գ.Գավրիլովիչ, Ի.Պողոսյան, Ս.Ռաչկո, Աննա Հարությունյան, Վ.Վուխրեր, Մ.Մինասյան, Աիդա Հարությունյան, Ա.Միխայլով, Կ.Հասանով, Ա.Վասիլևա («Ռոսիա» ՀԿ ժամանակավոր ներկայացուցիչ):

Բացակա՝ 6-ը. Լ.Հարությունյան, Ի.Գասպարյան, Ս.Սուլթանյան, Վ.Ամիրյան, Ջ.Դոմբայան, Խ.Հաջոյան:

Խորհրդի նախագահ՝ Սրբուհի Ղազարյան (նիստի նախագահող),

Խորհրդի նախագահի տեղակալ՝ Վարդան Ասցատրյան,

Խորհրդի քարտուղար՝ Նարինե Գուլյան:

Հրավիրված անձիք. Ռ.Սարդարով, Է.Պոլատով, Ս.Ավդալյան:

Նախապես ներկայացված նիստի օրակարգը հաստատվեց միաձայն:

Օրակարգի 1-ին հարցի համաձայն՝ քվեարկության դրվեց և միաձայն հաստատվեց ազգային փոքրամասնությունները ներկայացնող կազմակերպությունների կողմից ներկայացված հետևյալ ծրագրերն ու դրանց իրականացման համար նախատեսվող ֆինանսավորման չափերը.

«Աթուռ» Հայաստանի ասորական ասոցիացիա՝

Սպորտային մրցույթ ասորաբնակ գյուղերի միջև՝ Իրանում կայանալիք համաասորական խաղերի մասնակիցներ ընտրելու նպատակով,

ՀՀ ասորական սպորտային խմբերի մասնակցությունը Իրանում տրանսպորտային ծախսեր,

«Աթուռ» ասոցիացիայի ագային երգ ու պարի միջին խմբի մասնակիցների տարազների ձեռքբերում:

Ընդամենը՝ **900.000 ՀՀ դրամ:**

«Խայադթա» ասորական ֆեդերացիա» ՀԿ.

«Տարրական դասարանների ասորերեն դասագրքերի էլեկտրոնային տարբերակների ստեղծում» (գումարը՝ **1.132.500 ՀՀ դրամ):**

«Երևանի բելառուսական համայնք «Բելառուս» ՀԿ

Մինսկում կայանալիք աշխարհի բելառուսների արվեստի 4-րդ Փառատոնին Հայաստանի բելառուսական համայնքի ստեղծագործական խմբի մասնակցության համար անհրաժեշտ ավիաուղևորման ծախսեր՝ **600.000 ՀՀ դրամ:**

«Իվերիա» վրացական բարեգործական համայնք Հայաստանում. ՀԿ.

Գրական-երաժշտական երեկո «Վրացի և հայ տաղանդավոր գործիչներ» խորագրով:

Գումար՝ 550.000 ՀՀ դրամ:

«Հայաստանի հունական համայնքների միություն» ՀԿ.

Ծրագիր՝ «Ամառային մանկական ճամբար ազգությամբ հույն երեխաների համար»

Նախատեսվող գումարի չափը՝ **500.000 ՀՀ դրամ:**

«ՀՀ Երևանի «Պոնտի» հունական» ՀԿ

Հունական ազգային տոներ, հունարենի համաշխարհային օրվան նվիրված ինտելեկտուալ խաղ-մրցույթ, գումարը՝ **500,000 ՀՀ դրամ:**

«Հարմոնիա» ռուսական մշակույթի միջազգային կենտրոն» ՀԿ

Ծրագիր՝ «ՀՄՊ զինվորներին նվիրված Լ.Ազրոյանի հոդվածների ժողովածուի հրատարակում:

Նախատեսվող գումար՝ **500.000 ՀՀ դրամ:**

«Հայաստանի հրեական համայնք» ՀԿ

Ծրագիր՝ «Միջոցառում՝ նվիրված ՀՄՊ հաղթանակի 75-ամյակին, Հայոց ցեղասպանության 105-րդ տարեդարձին և հրեաների Հոլոքոստի ողբերգության»:

Նախատեսվող գումար՝ **450.000 ՀՀ դրամ:**

«Տեվտոնիա» գերմանացիների մշակութային ՀԿ

Ծրագիր՝ «Անդրկովկասի գերմանացիների պատմության մասին գրքերի հրատարակման ծախսեր»

Գումար՝ **450.000 ՀՀ դրամ:**

«Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա» ՀԿ

Ծրագիր՝ «Հայաստանի և Ուկրաինայի անկախությանը նվիրված համերգ Գյումրիում»

Գումար՝ **650.000 ՀՀ դրամ:**

«Եզդիների ազգային միություն» ՀԿ

Ծրագիր՝

«Եզդիական տոնացույցի համաձայն՝ տոների և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների կազմակերպում տարբեր եզդիաբնակ համայնքներում,

«Եզդի ընտանիքի օրացույցի տպագրում»,Հանդիպումներ Արագածոտնի մարզի սարատեղում

Նախատեսվող գումար՝ 980.000 ՀՀ դրամ:

«Երիտասարդ եզդիներ» ՀԿ

«Փաստավավերագրական ֆիլմի նկարահանում՝ նվիրված Հս.Իրաքում եզդիների ցեղասպանությանը» **(գումար՝1.000.000 ՀՀ դրամ):**

«Ռոսիա» ՀԿ

Ծրագիր՝ Հանրապետական օլիմպիադա ռուսաստանցի հայրենակիցների երեխաների միջև՝ նվիրված ՀՄՊ-ի հաղթանակի 75-ամյակին:

Նախատեսվող գումար՝ 500,000 ՀՀ դրամ:

«Հայաստանի քրդական ազգային խորհուրդ» ՀԿ

Ծրագիր՝

«Զագրոս» և «Ռյա-Թազա» թերթերի հրատարակչություն, հայ գրողների ստեղծագործությունների քրդերեն թարգմանությամբ հրատարակում, «Նավրոզ» ազգային տոնի կազմակերպում:

Նախատեսվող գումար՝ 1,700,000 ՀՀ դրամ:

Ծրագրերի համար հատկացվող և Խորհրդում հաստատված ընդհանուր գումարը կազմեց 10,412,500 ՀՀ դրամ:

Նախորդ նիստում միասնական միջոցառումների համար նախատեսված 1,002,000 ՀՀ դրամի փոխարեն այդ նպատակի համար կտրամադրվի 589,500 ՀՀ դրամ:

Նիստի նախագահող՝ Սրբուհի Ղազարյան

Քարտուղար՝ Նարինե Գուլյան